

7228

Ո Չ Մ Ը

ՀԱՄԱՅՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

ԵՒ

ՈՉ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆՆԵՐՈՒ

ՍՑԵՓԱՆ ԳԱՐԱԵԱՆ

Տճօրէն Քաղաքական Գործոց Արդարութեան Նախարարութեան

329.14

9 - 34

Կ. ՊՈԼԻՍ

ԻՌԻՑԻՆ Ե. ՄԱԹԻՍԵԱՆ

1910

Printed in Turkey

329.14

9-34

ԿՈՉ ՄԸ

ՀԱՄԱՅՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

ԵՒ

ՈՉ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆՆԵՐՈՒ

ՍՑԵՓԱՆ ԳԱՐԱԵԱՆ

Տնօրէն Քաղաքական Գործոց Արդարութեան Նախարարութեան

№ 2001

2010



Կ. ՊՈԼԻՍ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱԹՅԷՈՍԵԱՆ

1910

Հանայն Կռասկցական


Եւ

Ոչ Կռասկցական Ազգայիններու

Անկեղծ Կոչ մը

(Այս կոչն ուղղուած է անխօստ ամեն ազգայիններու։ Թախսանազին կ'աղայտել որ ազնուութիւնն ունենան ուշի ուշով եւ ծայրէ ի ծայր կարգաւ՝ գէթ մի եւ երէ կարեղի է երկու անգամ։ Մասնաւորապէս կը խնդրեն մեր խաղաղութեան եւ հրապարակագիրներէն որ հաճին հրապարակաւ եւ ամենայն անաչառութեամբ քննարկուել այն կոչին մէջ յայտնուած գաղափարները, մանաւանդ մի առ մի յայտնել Ազգային ընդհանուր ծրագրի ուղղագիծին նկատմամբ իրենց պատշաճ դատարարութիւնները եւ բարեփոխութիւնները, որպէսզի կարեղի ըզջայ կատարեալ Ազգային ծրագիր մը պատրաստել ընդհանուր համաձայնութեամբ, եւ իւրաքանչիւր խումբ՝ մի միայն այն ծրագրին անկեղծ եւ անքերի գործադրութեան վեհ նպատակին շուրջ մղի իր օրինաւոր եւ կենսաւոր պայքարը։)

Օսմանեան սահմանադրութիւնը վերահաստատող Իրաւէին յառաջ բերած աննկարագրելի խանդավառութեան և հանդէսներու օրերն անցնելէ վերջ՝ անհախճելի պատմական դէպքերու բնական բերմամբ, Հայ Ազգին առջև զգուեցան երկու ամենափափուկ և ամենածանր խնդիրներ։



1 9989 1
39

78244 - աւ
1369 - 87

առաջին թէ՛ Յեղափոխական կուսակցութիւնը օգտակար եղա՞ն Հայ Ազգին թէ՛ աղետաբեր . երկրորդ թէ՛ Յեղափոխական կուսակցութիւնը սահմանադրական ժողովներու մէջ պէ՞տք է ներկայացուցի՞չ ունենան թէ՛ ոչ . ուրիշ բառով, Յեղափոխականք և Ընկերավարականք ազգային գործերու մասնակցելո՞ւ են պաշտօնապէս թէ՛ ոչ :

Առաջին խնդրոյն բարդ և ծանրակշիռ հանգամանքն և այս մասին տիրող ցիրուցան և տարտամ կարծեաց զանազանութիւնը և ահագին տարբերութիւնը նկատողութեան առնելով, Ազգը մեծ հեռատեսութեամբ, մեծ իմաստութեամբ նախամեծար սեպեց սոյն հրատապ խնդրոյն լուծումը պատմութեան անաչառ դատողութեան ձգել : Երկրորդ խնդիրը լուծեց ի նպաստ կուսակցականաց, թէ՛ Ընդհանուր և թէ՛ Քաղաքական ժողովի անդամ ընտրելով յայտնի կուսակցականներ :

Այս նկատմամբ կատարելապէս համամիտ էի Ազգին հետ, Արդարեւ համեմատական պատգամաւորութեան (représentation proportionnelle) տիեզերաբար գնահատուած սկզբունքի համաձայն՝ լաւագոյն էր անկասկած կուսակցականներուն առիթ և հնարաւորութիւն տալ իրենց պահանջներն և գանգատներն օրինաւորապէս լսելի ընելու ազգային ժողովներու և խորհուրդներու մէջ, քան ստիպել գանոնք կամ անոնց առիթ հայթայթել դուռնէն պայքարելու Ազգային իշխանութեանց դէմ հակասահմանադրական բռնի միջոցներով : Քաղաքականութեան հիմնական մէկ օրէնքն է թէ՛ Ազգի մը կամ Պետութեան մը հանրային գործերը վարող պետերը պարտական են ընդունելու և գործադրելու ոչ այն նպատակները և միջոցները որոնք տեսականօրէն ամենէն բանաւորներն են, այլ անոնք՝ որ միանգամայն իրականացի են : Շատ անգամ ստիպուած են հրաժարելու անիրականալի լաւագոյնէն և գահանալու իրականալի լաւով . մինչև իսկ, ի պահանջել հար-

կին, անիրականալի լաւէն ալ հրաժարելով՝ չարեաց փոքրագոյնով բաւականանալ կը հարկադրուին :

Ահա այս նկատողութեամբ և Ընդհանուր ժողովոյ կամքին և իմ անձնական համոզմանս համաձայն վարուելու նպատակաւ էր միայն՝ որ մի ամբողջ տարի իբր Քաղաքական ժողովոյ ատենապետ, անլուր դժուարութեանց դէմ դնելով՝ ջանացի կուսակցականաց և ոչ-կուսակցականաց մէջ գոնէ խզում յառաջ չբերելու չափ համերաշխութիւն պահելու, առանց սակայն ո՛ր և է խնդրոյ լուծումն կուսակցութեանց մասնաւոր շահուց հպատակեցնելու : Արդարութեան նուիրական պարտականութիւն մը կը համարիմ հրապարակաւ և անկեղծօրէն յայտարարելու թէ մեր երկու կուսակցական ընկերներն՝ Շահրիկեան և Պոյաճեան էֆէնտիներն երբէք վարչութեան մէջ կուսակցական յետին նպատակներով չուղեցին շահագործել Ազգին կողմանէ իրենց ուղղամտութեան յանձնուած նուիրական պաշտօնը :

Բայց աւա՛ղ որ մեր վարչութեան միամեայ չըջանին վերջերը՝ 1. Քաղաքական ժողովոյ անդամներէն և Դաշնակցական կուսակցութեան պետերէն Շահրիկեան էֆէնտիի ազգային գործոց քաջ հմտութիւնը, բացարձակ անշահախնդրութիւնը և տարօրինակ աշխատասիրութիւնը զուգակշռող ծայրայեղօրէն պահանջկոտ, խրոխտ եւ յամառ նկարագիրը՝ որ զինքը մղած էր մէկմէկու ետեւէ բուռն յարձակումներ և ծանր ամբաստանութիւններ ընելու մէկէ աւելի երեսփոխան և ոչ երեսփոխան ազգայիններու հասցէին . 2. Ազատամարտ լրագրի հրատարակութիւնն և իրեն յատուկ ուղղութիւնը . 3. Դաշնակցական կուսակցութեան իթիբիատ վէժերազգը գօմիթէի հետ կնքած համաձայնութիւնը . 4. Այլ մասաւանդ տեսակ տեսակ հոգեբանական նկատողութիւններ զորս նախամեծար կը սեպեմ լուծեամբ անցնիլ կիրքերը

չգրգռելու համար, այս ամէն զանազան պատճառները նոր հոսանք մը, նոր աղանդ մը ստեղծած էին Ազգային Ընդհանուր Ժողովէն ներս և դուրս, աղանդ մը՝ որուն բանն հաւատոյ էր «Կուսակցականները Վարչութիւնէն դուրս»: Բայց ինչ որ աւելի ցաւալի է, այս նոր հոսանքին ծնունդ տուող իսկական պատճառները քողարկելու պէտք գգալով, ապացուցանելու ձեռնարկողներ եղան թէ՛ Վարչութիւնը Դաշնակցական Կուսակցութեան ազդեցութեան տակ կորուչ է և կը վարէ ամէն ինչ, և իբր փաստ յառաջ բերին նախ Աղթամարայ խնդիրը՝ որ երեք շաբաթ ուսան պէս երկար միջոցի մը մէջ վերջնականապէս լուծուած չէր, երկրորդ՝ Եօնանէսքուի բառարանի նկատմամբ դաշնակցական Բաժնաձեռնի հետ կնքուած ազգայնաւարդադրութիւնը. երրորդ՝ Պատրիարքի հրաժարականը: (Աղթամարայ խնդիրը մինչև հիմայ, այսինքն ամբողջ տարիէ մ'ի վեր դեռ իր վերջնական լուծումն ստացած չէ: Եօնանէսքուի բառարանի խնդրոյն էութիւնը շատ լաւ պիտի հասկցուի երբ այդ մասին իմ կողմանէ պատրաստուած և Ս. Պատրիարքի յանձնուած ընդարձակ տեղեկագրին Ընդհանուր Ժողովոյ մէջ ընթերցման կարգը դայ: Գալով Պատրիարքի հրաժարականին, այն համոզումն ունիմ միշտ որ եթէ Ս. Պատրիարքը հրաժարած չըլլար, գոնէ տասը քսան հայ եւս պիտի կախուէին անկրէպ Այս մասին աւելի համոզիչ հրապարակային բացատրութիւններ տալ անօգուտ կը համարեմ:)

Այս նոր աղանդին նուիրագործման իբր սկզբնաւորութիւն՝ Ազգային Ժողովն որոշեց որ կառավարութեան հետ Ատանայի վերաբերեալ բանակցութիւնը միայն Կրօնական Ժողովոյ երկու անդամներէ, Բիւզանդ Քէչեանէ քէչեանի և ինձմէ բաղկացեալ քառանդամ Յանձնախումբի մը յանձնուի: Նկատելով որ 'ի սկզբան Ազգային Ժողովն շատ մեծ խմատութեան գործ մ'ըրած էր վար-

չութեան մէջ կուսակցութեանց ներկայացուցիչներ ընտրելով, նկատելով որ փորձը հաստատած էր այն հաւատքս թէ մինչև իսկ եթէ կուսակցականաց դէմ պայքար մղել պէտք ըլլար, նախամեծար էր ներսէն պայքարիլ քան դուրսէն, նկատելով որ Ազգային Ժողովոյ որոշումը ըստ իմ կարծեաց հակասահմանադրական էր և պարզապէս Քաղաքական Ժողովոյ հաւաքական մարմնոյն դէմ անվրատահութեան բացորոշ արտայայտութիւն, (թէպէտ իմ անձիս նկատմամբ պատուաբեր և իմ կողմանէ չնորհաւարութեան արժանի վստահութեան ապացոյց), պարտք համարեցի իսկոյն հրաժարիլ վերոյիշեալ մասնախումբի մասնակցութենէն, ինչպէս հրաժարած էր Քէչեան քէչեանի իրեն յատուկ նկատողութիւններով: Ասով ալ չգորհնալով, հաւատարիմ մնալու համար իմ վերոյիշեալ նկատողութեանցս, Քաղաքական Ժողովոյ հրաժարականին Ազգային Ժողովոյ կողմանէ ընդունուելէն վերջ, ամենայն անկեղծութեամբ յայտարարեցի Ազգային Ժողովոյ թէ կազմուելիք Վարչութեան մէջ պաշտօն ընդունիլ անկարելի է ինձ: Այդ օրէն՝ մամուլը նախորդ հրաժարեալ Վարչութիւնը միջոց Տապաղեալ Գաւառեան Շահրիկեան Վարչութիւն անուամբ:

Այս նոր աղանդի արդիւնք եղող դէպքերէն բաւ է միայն յիշել Ազգին ամենացաւելի մէկ ճգնաժամուն՝ ամիսներ տեւող անիլիսանութիւնն և յարաբերական կենսական խնդրոց յետաձգումը, — նոր Վարչութեան Ատենապետի և մի քանի անդամոց հրաժարականը, — ամին կողմ կուսակցականաց և ոչ կուսակցականաց մէջ անողոք և զայթակողալից պայքար, — քանակիծում խմբադիրներու, — արիւնահեղութիւն Իզմիրի մէջ, — յարձակում Վարչութեան Ատենապետի վրայ — վերջ ի վերջոյ Քաղաքական Ժողովոյ և Ս. Պատրիարքի պատճառաբանեալ հրաժարականը:

Հայ Ազգը ոչ միայն իր տոհմային տարեգրութեանց,

չգրգռելու համար, այս ամէն զանազան պատճառները նոր հոսանք մը, նոր աղանդ մը ստեղծած էին Ազգային Ընդհանուր Ժողովէն ներս և դուրս, աղանդ մը՝ որուն բանն հաւատոյ էր «Կուսակցականները Վարչութիւնէն դուրս»: Բայց ինչ որ աւելի ցաւալի է, այս նոր հոսանքին ծնունդ տուող իսկական պատճառները քողարկելու պէտք գգալով, ապացուցանելու ձեռնարկողներ եղան թէ՛ Վարչութիւնը Դաշնակցական Կուսակցութեան ազդեցութեան տակ կորույն է և կը վարէ ամէն ինչ, և իբր փաստ յառաջ բերին նախ Աղթամարայ խնդիրը՝ որ երեք շաբաթ ուսան պէս երկար միջոցի մը մէջ վերջնականապէս լուծուած չէր, երկրորդ՝ Եօնանէսքուի բառարանի նկատմամբ դաշնակցական Բաժնեկցականի հետ կնքուած ազգամիաս կարգադրութիւնը. երրորդ՝ Պատրիարքի հրաժարականը: (Աղթամարայ խնդիրը մինչև հիմայ, այսինքն ամբողջ տարիէ մի վեր դեռ իր վերջնական լուծումն ստացած չէ: Եօնանէսքուի բառարանի խնդրոյն էութիւնը շատ լաւ պիտի հասկցուի երբ այդ մասին իմ կողմանէ պատրաստուած և Ս. Պատրիարքի յանձնուած ընդարձակ տեղեկագրին Ընդհանուր Ժողովոյ մէջ ընթերցման կարգը դայ: Գալով Պատրիարքի հրաժարականին, այն համոզումն ունիմ միշտ որ եթէ Ս. Պատրիարքը հրաժարած չըլլար, գոնէ տասը քսան հայ եւս պիտի կախուէին անվրէպ Այս մասին աւելի համոզիչ հրապարակային բացատրութիւններ տալ անօգուտ կը համարեմ:)

Այս նոր աղանդին նուիրագործման իբր սկզբնաւորութիւն՝ Ազգային Ժողովն որոշեց որ կառավարութեան հետ Ատանայի վերաբերեալ բանակցութիւնը միայն Կրօնական Ժողովոյ երկու անդամներէ, Բիւզանդ Քէչեան Էֆէնտիէ և ինձմէ բաղկացեալ քառանդամ Յանձնախումբի մը յանձնուի: Նկատելով որ ՚ի սկզբան Ազգային Ժողովն շատ մեծ իմաստութեան գործ մըրած էր վար-

չութեան մէջ կուսակցութեանց ներկայացուցիչներ ընտրելով, նկատելով որ փորձը հաստատած էր այն հաւատքս թէ մինչև իսկ եթէ կուսակցականաց դէմ պայքար մղել պէտք ըլլար, նախամեծար էր ներսէն պայքարիլ քան դուրսէն, նկատելով որ Ազգային Ժողովոյ որոշումը ըստ իմ կարծեաց հակասահմանադրական էր և պարզապէս Քաղաքական Ժողովոյ հաւաքական մարմնոյն դէմ անվստահութեան բացորոշ արտայայտութիւն, (թէպէտ իմ անձիս նկատմամբ պատուարեր և իմ կողմանէ չնորհակալութեան արժանի վստահութեան ապացոյց), պարտք համարեցի իսկոյն հրաժարիլ վերոյիշեալ մասնախումբի մասնակցութենէն, ինչպէս հրաժարած էր Քէչեան Էֆէնտի իրեն յատուկ նկատողութիւններով: Ասով ալ չգոհանալով, հաւատարիմ մնալու համար իմ վերոյիշեալ նկատողութեանցս, Քաղաքական Ժողովոյ հրաժարականին Ազգային Ժողովոյ կողմանէ ընդունուելէն վերջ, ամենայն անկեղծութեամբ յայտարարեցի Ազգային Ժողովոյ թէ կազմուելիք Վարչութեան մէջ պաշտօն ընդունիլ անկարելի է ինձ: Այդ օրէն՝ մամուլը նախորդ հրաժարեալ Վարչութիւնը մկրտեց Տապալեալ Գաւառեան Շահրիսկեան Վարչութիւն անուամբ:

Այս նոր աղանդի արդիւնք եղող դէպքերէն բաւ է միայն յիշել Ազգին ամենացաւելի մէկ ճգնաժամուն՝ ամիսներ տեւող անիլխանութիւնն և յարաբերական կենսական խնդրոց յետաձգումը, — նոր Վարչութեան Ատենապետի և մի քանի անդամոց հրաժարականը, — ամեն կողմ կուսակցականաց և ոչ կուսակցականաց մէջ անողոք և գայթակղալից պայքար, — քանակոծում խմբադիրներու, — արիւնշահողութիւն Իզմիրի մէջ, — յարձակում Վարչութեան Ատենապետի վրայ — վերջ ի վերջոյ Քաղաքական Ժողովոյ և Ս. Պատրիարքի պատճառաբանեալ հրաժարականը:

Հայ Ազգը ոչ միայն իր տոհմային տարեգրութեանց,

այլ Ընդհանուր Ազգաց պատմութեան մէջ աննախընթաց աղէտներու դիւցադնաբար դիմադրելէ և իր ազգային գոյութիւնն ու նկարագիրն անվթար և անաղարտ պահելէ յետոյ, այսօր այդ աղէտներէ աւելի աղետալի ներքին երկպառակութեանց ճգնաժամու մը մէջ կը տապալակի . երկպառակութիւններ՝ որոնց եթէ ժամ առաջ արմատական դարման մը չգտնուի, անվրէպ նուաստութիւն, այլասերում և քայքայում կ'սպառնայ Հայ ժողովրդին, և այժմ փոխանակ այս երկպառակութեանց պատճառները ուսումնասիրելու և արմատական դարման մը գտնելու, օրուան ամենէն հրատապ խնդիրն եղած է գիտնալ թէ պէտք է Քաղաքական Ժողովոյ և Ս. Պատրիարքի հրաժարականը ընդունիլ թէ ո՛չ . մինչեւ անհրաժեշտ էր նախ քննել այն պատճառներն՝ որք ստիպած են թէ զՔաղաքական Ժողով և թէ զՊատրիարք իրենց հրաժարականը տալու, ապա թէ ոչ միեւնոյն պատճառները պիտի ստիպեն անվրէպ յաջորդ ո՛ր և է Վարչութիւն և Պատրիարք իրենց կարգին հրաժարելու, ամուլ փորձերէ վերջ, և խեղճ Ազգն է որ միշտ պիտի տուժէ :

Իմ համոզումս այն է թէ՛ իբր արմատական դարման այս բոլոր ազգակործան երկպառակութեանց և չարեաց, պէտք է նախ՝ Քաղաքակրթեալ Ազգաց պատմութեան մէջ Ընկերավարութեան և Յեղափոխութեան վարած դերը ճշդել, մեր Հայ Յեղափոխականաց և Ընկերավարականաց նկատմամբ Ազգին մէկ մասին մէջ տիրող թիւրիմացութիւնները և նախապաշարումները միանգամ ընդ միշտ փարատելու համար : Երկրորդ՝ քննել մեր Հայ Յեղափոխական և Ընկերավարական Կուսակցութեանց և ոչ-Կուսակցականներու փոխադարձ պահանջները և զանգատները : Երրորդ թէ այս փոխադարձ պահանջները և զանգատները, թէ Հայ Ազգին արդի միջավայրն և միւս բոլոր պարագաները նկատողութեան առնելով, Ազգին ստիպողա-

կան և աստիճանաբար իրականալի պէտքերուն գոհացում տուող ազգային ընդհանուր մի ծրագիր պատրաստել, և այս ծրագրին գործադրութիւնը վարչութեան մը յանձնել որուն մէջ Կուսակցականներ եւս զանուկն և խորհրդակցին, փոխադարձ հակակշիռի դրութեամբ :

Նախ եւ առաջ Քաղաքակրթեալ Ազգաց պատմութեան մէջ Ընկերավարութեան եւ Յեղափոխութեան դերը հեղեմք

Ընդհանուր Ազգաց պատմութիւնը կը սորվեցնէ թէ ի սկզբանէ հետէ մարդկային սեռը գլխաւորաբար երկու դասակարգէ բաղկացած է . առաջին դասակարգ մը՝ առանձնաշնորհեալ, որ աշխարհի շարժուն և անշարժ ստացուացքներուն և անոնց հալթալթած նիւթական և մտաւորական վայելքներուն ամենամեծ մասը իրեն յատկացուցած է . երկրորդ դասակարգ մը՝ ժառանգազուրկ, որուն ճակատագիրն եղած է չարաչար աշխատիլ, տառապիլ, և առաջին դասակարգին սեղանէն աւելցած փշրանքներով և սոյն դասակարգին բնական դաշնակիցն եղող կղերականներուն առատորէն չոսայած կրօնական մխիթարութիւններով՝ այսինքն դժոխքի սպառնալիքներով զուգակշռուած արքայութեան խոստումներով գոհանալ :

Առաջին դասակարգը կազմած է միշտ ամենաջնջին փոքրամասնութիւն մը բաղդադմամբ երկրորդ դասակարգին որ կը ներկայացնէ ամենաստուար մեծամասնութիւն մը : Բնական օրինաց բերմամբ, առաջին դասակարգը եղած է գիտակցաբար պահպանողական, այսինքն իր դասակարգին նկատմամբ ազատական և յառաջդիմական, և միւս դասակարգին նկատմամբ բռնապետական և յետադիմական : Երկրորդ դասակարգը թնազդեալ եւ անգիտակցաբար դարերու շրջանին մէջ հառաչելէ դադրած չէ ազատութեան, արդարութեան և յառաջդիմութեան ետեւէ .

բայց իր տգիտութիւնը և տգիտութենէն անբաժան եղող նախապաշարութիւններն արդեւք եղած են իր տենչանաց իրա-
գործման: Փոքրամասնութիւնը ունեցած է իր կողմը նիւ-
թական և մտաւորական ամէն առաւելութիւն: մեծամաս-
նութիւնը ունեցած է մի առաւելութիւն միայն, բիրտ
ուժ: Փոքրամասնութիւնն այս բիրտ ուժն ալ ճարտարու-
թեամբ յափշտակած, կազմակերպած և նոյն ինքն մեծա-
մասնութեան դէմ գործածելու յաջողած է չնորհիւ իր նիւ-
թական և մտաւորական գերազանցութեան, չնորհիւ մա-
նաւանդ մեծամասնութեան անգիտակցութեան: Ի զո՞ւր,
բարձր հանճարի և ազնիւ սրտի տէր նշանաւոր իմաստա-
սէրներ և ընկերաբաններ քաջութիւնն և անձնութիւնը
ունեցած են բռն յորդորներ կարգալու փոքրամասնու-
թեան: Զայն բառաւոր յանապատի: մեծամասնութեան
ստացուածքն, պատիւն և կեանքը դարերով տրամադ-
րելի մնացած են ի հաճոյս փոքրամասնութեան: Բարե-
բաղդաբար պարտուց և իրաւանց հաւասարութեան, այ-
սինքն Արդարութեան սուրբ Ողին՝ բռնակալութեան և
անիրաւութեան դէմ մաքառելու համար ծնունդ տուած
է երկու հօր հաստատութեանց: Ընկերավարութիւն և Յե-
ղափոխութիւն: Դարերու շրջանին մէջ, այս գերազան-
ցօրէն բարերար երկու հաստատութիւնները իրենց մղած
անդադար պայքարով աճեցած, զարգացած և վերջապէս
նախ Անգլիոյ յետոյ Գաղղիոյ մէջ կրցած են հիմնել Սահ-
մանադրութիւնը:

Բայց դժբաղդաբար՝ Գաղղիոյ մէջ մանաւանդ, մի կող-
մանէ Ընկերավարութեան առաջնորդ ողջամիտ, իմաստա-
սէր և ընկերաբանական սկզբանց համաձայն գործող վա-
րիչներու շարքերուն մէջ ծայրայեղ և անիրականալի գա-
ղափարներով բորբոքած տաքզլուխներ սպրդած, միւս կող-
մանէ Յեղափոխութեան առաջնորդ վեհօգի, անձնուէր և
գիտակից հերոսներու ռազմերուն մէջ բաղդախնդիր և փա-

ռամոլ ռճրագործներ խառնուած են, որոնք խուժանի ի
դարուց հետէ կուտակուած ատելութիւնն և թագուն
անասնական ախորժակները գրգռելու յաջողած են. և այս
կերպով, ճշմարտապէս ապշեցուցիչ և վրդովիչ հակասու-
թեամբ մը, Յեղափոխութիւնը մի կողմանէ անխափր քան-
դած, աւերած է անցելոյն յոռեգոյն և լաւագոյն հաստա-
տութիւնները, դադանալայիլ անգթութեամբ նուիրագոր-
ծած է ամենէն անագորոյն եղեռներն և ռճիրները, միւս
կողմանէ մարդ էակին նուիրական պարտուց և իրաւանց
սահմաններն անջնջելի կերպով միանգամ ընդ միշտ գծած
և համայն աշխարհի հռչակած է, հաստատելով Սահմա-
նադրութիւնը: Ի՞նչ վսեմ նիւթ խորհրդածութեան, ի՞նչ
ազդու և չինիչ դաս: Այն յաւիտենական սկզբունքները
զորս բանակութեան ձայնը, խղճի ձայնը, արդարութեան
ձայնն որ նոյն ինքն Աստուծոյ ձայնն է՝ դարերով չէին
կրցած ընդունել տալ անգիտակից մեծամասնութիւնը չա-
հագործող գիտակից փոքրամասնութեան, Յեղափոխու-
թիւնը կրցած է հաստատել անդառնալի կերպով: Հին և
նոր աշխարհը Ընկերավարութեան և Յեղափոխութեան վեհ
ոգւոյն կը պարտի իր ազատութիւնն և քաղաքակրթու-
թիւնն: մենք ամեն Օսմանցիքս նոյնպէս Ընկերավարու-
թեան և Յեղափոխութեան սուրբ ոգւոյն ներշնչմամբ մի-
այն Օսմանեան Տէրութեան կազմութենէն վեց դար վերջ
կրցանք Ազատութեան, Արդարութեան և Հաւասարու-
թեան տիրանալ: միով բանիւ Ընկերավարութիւնն և Յե-
ղափոխութիւնն միայն կրցան պարգեւել մարդկային սե-
ռին Սահմանադրական դրութիւնն որ մարդկային հաստա-
տութիւններէ անբաժան թերութիւններովն հանդերձ՝ ոչ
միայն ընդհանուր քաղաքակրթութեան, ազատութեան
և արդարութեան միակ պայմանն ընդունուած և հռչակ-
ուած են տիեզերաբար, այլ և դարուս ամենէն լուրջ,
ամենէն չափաւոր ընկերաբաններն եւ իմաստասէրներն

անգամ համաձայն են թէ Յեղափոխութիւնը իր նուիրական և ճակատագրական դերը դեռ աւարտած չէ նոյն ինքն քաղաքակրթեալ հին և նոր աշխարհի մէջ։ Այս ճշմարտութիւնն պէտք է ամեն վարկեան ներկայ ըլլայ ամեն անոնց մտաց առջև՝ որոնք ազգի մը կամ պետութեան մը հանրային գործերը վարելու կոչուած են։

Սահմանադրութիւնը հիմնարկող Ընկերվարութեան և Յեղափոխութեան բուն նպատակն էր մամուլի, հրապարակասօսութեանց և կրթութեան ազատութեան շնորհիւ, մեծամասնութիւնը կատարելապէս գիտակից ընել իր պարտուց և իրաւանց, և ի վիճակի դնել զայն օրինաւոր միջոցներով և հաւասար զեմքերով պաշտպանելու իր իրաւունքը փոքրամասնութեան մեքենայութեանց և նիւթական և մտաւորական առաւելութեանց դէմ։ Բայց ափսոս որ Ընկերվարութեան և Յեղափոխութեան կողմանէ իրեն յանձնուած սոյն առաքելական սուրբ դերն լիովին կատարելու կարող չէ՝ եղած Սահմանադրութիւնը, քանզի իր այս նուիրական պաշտօնի կատարման մէջ բնութեան մի անողոք օրէնքին բաղխած է, այն է թէ մարդ էակն այն ատեն միայն կամովին կը յարգէ իր ընկերին իրաւունքն՝ երբ այս վերջինն գիտակից է իր իրաւանց և գիտէ ի հարկին զայնս պաշտպանել և գործադրել տալ օրինաւոր միջոցներով։ Այո՛, Սահմանադրութիւնը պարտուց և իրաւանց սահմանը գծած և զայնս գործադրելու օրինաւոր միջոցները ճշգրտ է, բայց չէ՛ կրցած և չէր կրնար մեծամասնութեան ներշնչել միանգամայն իր իրաւանց ըմբռնումը և զայնս գործադրել տալու օրինաւոր միջոցներու գիտակցութիւնը, առանց որոյ Սահմանադրութիւն, արդարութիւն և ազատութիւն լոկ մեռեալ տառեր են։ Սահմանադրութեան հիմն եղող մեծամասնութեան ձայնը այն ատեն միայն ճշմարտօրէն օրինաւոր է, երբ այդ

մեծամասնութիւնը իր պարտուց և իրաւանց կատարեալ գիտակցութեան տիրացած է, ապա թէ ոչ այդ մեծամասնութիւնը արուեստական է և խարդախեալ։ Ո՛վ կրնայ ուրանալ թէ, օրինակի համար, Հայ Սահմանադրութիւնը կէս դարու շրջանի մը մէջ ճիշտ մեծամասնութեան անգիտակցութեան պատճառաւ՝ ոչ ժողովրդին ամենակենսական պահանջներուն կրցած է գոհացում տալ և ոչ մանաւանդ զայնթակեցուցիչ զեղծումներու առաջքն առնուլ մինչև այսօր։ Եկո՛ տես որ, մեծամասնութեան կատարեալ գիտակցութիւնը մի միայն առանցնալնորհեալ փոքրամասնութեան խղճամիտ աջակցութեան և իմաստուն առաջնորդութեան շնորհիւ կրնայ սկսիլ և իրականանալ։ Փոքրամասնութիւնը որ այս ճշմարտութեան քաջ տեղեակ է, Սահմանադրութեան այս թերութիւնն ամենաճարտար կերպով շահագործելու աշխատած է միշտ և շատ անգամ յաջողած։ Նկատելով որ Սահմանադրութեան հիմը ձայնից մեծամասնութիւնն է, Սահմանադրական ընտրութեանց ժամանակ իր նիւթական և մտաւորական առաւելութիւններէն և մեծամասնութեան անգիտակցութենէն օգտուելով՝ փոքրամասնութեան համակիրներ ընտրել կուտայ և այսպէս՝ մեծամասնութեան ընտրական թանկագին իրաւունքը նոյն մեծամասնութեան իրաւանց բռնաբարման կը գործածէ մեծ յաջողութեամբ, և նորա անգիտակցութիւնը յաւերժացնելու կարող կը հանդիսանայ։ Մինչև իսկ այն երեք զօրութիւնները՝ որոնց վրայ Ընկերվարութիւնը և Յեղափոխութիւնը իրենց բոլոր յոյսն դրած էին, այսինքն մամուլի, հրապարակասօսութեան և կրթութեան ազատութիւնը՝ անխղճօրէն շահագործուած է յօգուտ փոքրամասնութեան։

Ահա աստ կը կայանայ Սահմանադրական դրութեան էական թերութիւնը, թերութիւն մը՝ զոր Ընկերաբան-

ներ Սահմանադրութեան սեղանաբեկութիւնը պանգը-
ռութիւնը յորջորջելու չափ յառաջ դացած են, յայտարա-
րելով միանգամայն թէ դժբաղդատաբար Սահմանա-
դրութեան տեղն բռնող ուրիշ հաստատութիւն մը դեռ
գտնուած չէ:

Ընկերավարութիւնը և Յեղափոխութիւնը տեսնելով
որ Սահմանադրութեան հռչակմամբ իրենց նուիրական
դերը լրացած չկրնար համարուիլ, կը ծառանան կրկին
փոքրամասնութեան դէմ և հաշիւ կը պահանջեն իրմէ:
Այս խուլ և բռնու պայքարն է որ այսօր հին և նոր
աշխարհի բոլոր Սահմանադրական պետութեանց մէջ
օրուան ամենահրատապ խնդիրն եղած է: Բայց ինչ որ
գերազանցօրէն ցաւալի է՝ այն է թէ անիրականալի
իղձերով ուռեցած ցնորամիտներու և ամէնէն նուիրա-
կան հաստատութիւնները քանդելու, կործանելու տեն-
չով վարակուած անիշխանականներու և պաշտ-պօղու-
ներու հրոսայտութեամբ մը Ընկերավարութեան և Յեղափո-
խութեան կանոնաւոր շարքերուն խառնուելով՝ կը վար-
կաբեկեն նոցա արդար դատը և ազնիւ նպատակը.
փոքրամասնութիւնը այս կերպով առիթ կ'ունենայ
դիմումնաւոր նենգամտութեամբ շփոթելու լուրջ և
անկեղծ Ընկերավարականները և Յեղափոխականները
ցնորամիտ և ասպատակող անիշխանականներու հետ:

Այսօր բոլոր քաղաքակրթեալ Ազգերն ընկերավարու-
թիւնը իբր հանրային օգտին ծառայող հաստատութիւն
ճանչցած են տեսականապէս և գործնականապէս, պայ-
մանաւ որ ընկերավարութեան նպատակն ըլլայ 1. Հո-
ղատիրութեան իրաւանց աստիճանաբար կտրելի եղածին
չափ բաղմամբիւ ձեռքերու մէջ ցրուիլ՝ փոխանակ սա-
կաւաթիւ ձեռաց մէջ իբր մենաշնորհ կաշկանդուելու.
2. Կարելի եղածին չափ բաղմամբիւ անհատներու հնա-
րաւորութիւն ընծայել իր աշխատութեամբ բաժին ստա-

նալու դրամադիւսի և կալուածատիրութեան մէջ, այնպէս
որ ամեն աշխատող, ամեն գործաւոր յոյս և միջոց ու-
նենայ աշխատութեան և խնայողութեան և մանաւանդ
գործակցական (գօօքէռաթիւ) դրութեամբ օր մը ինքն
ալ իր կարգին դրամատէր և կամ բաթմօն և կամ շա-
հակից ըլլալու. 3. Անիրականալի և ցնորամիտ գաղա-
փարներով վարակեալ այսահարներ մուտ չգտնան ընկե-
րավարականներու շարքերուն մէջ: Արդ՝ առողջ մտքի
և զգայուն սրտի տէր անձ մը կրնայ երեւակայուիլ որ
այս պայմաններով Ընկերավարութեան համակիր և կու-
սակից չըլլայ:

Գալով Յեղափոխութեան. բոլոր քաղակրթեալ ազ-
գերն զայն կ'ընդունին իբր հանրային օգտին ծառայող
բարերար կազմակերպութիւն մը, երբ երկրի մը մէջ կը
տիրէ բացարձակ բռնապետութիւն, անիրաւութիւն,
անհաւասարութիւն, յափշտակութիւն և ոճրագործու-
թիւն, երբ օրինաւոր ամեն միջոցները անօգուտ տեղը
սպառելէ վերջ, հասարակաց կարծիքը համոզում կը գո-
յացնէ թէ բռնի ուժի դիմելէ զատ փրկութեան յոյս չէ
մնացած, ըստ քրիստոնէական վարդապետութեան թէ՝
որ ոչն լուիցէ ունկամբ, տան նմա լսել թիկամբք: Վկայ
այս ճշմարտութեան անցելոյն մէջ Անգլիոյ և Գաղղիոյ
և ներկայի մէջ Տաճկաստանի և Բօթնուգալի Յեղափո-
խութիւնները որոնք սկզբմամբ և իրականօրէն փառա-
բանուեցան և պաշտօնապէս ճանչցուեցան բոլոր միւս
պետութեանց կողմանէ: Իսկ երբ Յեղափոխութիւնը
վերջիջեալ պայմաններէն զուրկ է, այն ատեն իբր ան-
իշխանականութիւն կը դատապարտուի և կը հալածուի
ամենէն ազատասէր և լուսաւորեալ Տէրութեանց կող-
մանէ իսկ:

Քաղաքակրթեալ աշխարհի մէջ Ընկերավարութեան
և Յեղափոխութեան կատարած և կատարելիք նուիրական

և պատմական դերին նկատմամբ մեր պարզած տեսու-
թիւնները մեր ազգային գործերուն պատշաճեցնելով,
կը համոզուինք իսկոյն թէ կուսակցականաց և ոչ-կու-
սակցականաց մէջ տիրող երկպառակութեանց բուն պատ-
ճառը անձերու խնդիր չէ, այլ հիմնական սկզբունքներու
խնդիր է:

Կը համոզուինք նոյնպէս թէ ճշմարիտ Հայ Ընկերա-
վարականք և Յեղափոխականք պէտք է յարգուին իբր
Հայ Ազգին անձնուէր բարեբարներ և ոչ թէ մարդկային
սեռէ դուրս ճիւղային էակներ, ինչպէս կ'երեւակայեն
խել մը միամիտներ և հաւտացնել կ'ուզեն խումբ մը
չարամիտներ:

Քննենք այժմ մեր Հայ Յեղափոխական եւ Ընկերավա-
րական կուսակցութիւններու եւ ոչ կուսակցականնե-
րու փոխադարձ պահանջներն եւ գանգատները


Ոչ-կուսակցականք կ'ըսեն կուսակցութեանց.

«Օսմանեան և Հայ Սահմանադրութեան վերահաս-
տատուելէն անմիջապէս վերջ՝ մենք ձեր վերադարձը
ողջունեցինք և տօնեցինք ամենամեծ խանդավառու-
թեամբ և անկեղծութեամբ՝ յուսալով որ դուք ձեր
յեղափոխական դրօշը պիտի ծալէք և մեզ հետ Սահ-
մանադրական միջոցներով պիտի աշխատիք Ազգին
աղէտները դարմանելու. բայց շատ չանցած՝ տեսնեք
որ ձեր գործերն կ'ապացուցանեն թէ դուք օրինասէր
և բարեշրջութեան օրինաց համաձայն յառաջդիմութեան
համակիր ճշմարիտ ընկերավարութիւն չէ որ կը դաւա-
նիք և կը քարոզէք, այլ երազատես գոմիւնիսթներու
և անառչիսթներու անիրականալի ցնորքները և մանա-
ւանդ անոնց յատուկ սպառնական և բռնի միջոցները
որդեգրած էք: Եւ որովհետեւ այս ցնորական գաղա-

փարներու գլխաւոր արգելքներն են Հայ ժողովրդին
կրօնասիրութիւնը, օրինապահութիւնը, ընտանեկան
կեանքի մաքրութիւնը, ծնողական հնազանդութիւնը,
նամանաւանդ ազգասիրութիւնը, ձեռնարկած էք սպառ-
նալեօք և ի հարկին բռնի ուժով այս արգելքները վեր-
ցնել: Բայց որ աւելի ծանր է, ըստ որում դուք մեծաւ
մասամբ դրամ շահելու օրինաւոր զբաղմունքներէն զուրկ
էք, մէկ կողմէն դրամաշորթութեամբ կ'ուզէք ձարել
ձեր նպատակներուն իրականացման անհրաժեշտ եղող
նիւթական միջոցները, և միւս կողմանէ ազգային բոլոր
պաշտօնները կուզէք ձեր ձեռքն անցնել՝ ձեր ուզած
եղանակաւ և միջոցներով շահագործելու համար Ազգին
եկամուտները:

«Հայ Ազգին կրօնասիրութիւնը քայքայելու համար,
կուզէք կրօնքի վրայ յարձակիլ նոյն ինքն իր նուիրա-
կան տաճարին մէջ, ինչպէս ժամանակին զօրապետ մը
խրատած էր յարձակիլ Հռովմայեցւոց վրայ նոյն ինքն
Հռովմի մէջ: Ձեր արքանեակներն և առաքեալներն
կրօնքը կը ծաղրեն և խեղճ Հայ ժողովրդին ամէնէն
նուիրական զգացումները կը վիրաւորեն, սիրտը կը
թունաւորեն և միտքը կը պղտորեն, որով Հայ ժողո-
վրդին ծոցը սկսած է աճիլ և բազմանալ անսանձ
անառչիսթներու սերունդ մը որ կ'սպառնայ անհեղ
վտանգ մ'ըլլալ Ազգին գլխուն, վտանգ մը որ ապա-
գային կրնայ մոռցնել տալ նոյն իսկ ջարդերն: Հայ
ժողովրդին օրինաւորութիւնը քայքայելու համար
Սահմանադրութիւնը կը հռչակէք հինցած ծթուած օրէնք
մը որ մեծ-էֆէնտիներու համար շինուած չտկուած է
ժողովրդին անգիտակցութիւնը շահագործելու նենգա-
ւոր յետին նպատակաւ. հետեւաբար իբր Սահմանադրա-
կան փաստ, սօփա և ռէվօլյւէր գործածելն ձեզ սկզբունք
ըրած էք: Ազգային հաստատութեանց վրայ կը յարձա-

1369-87
2289
239



կի՞ք և ի հարկին կը քանդէ՞ք ու կը յափշտակէ՞ք և երբ հասարակաց կարծիքը և օրինաւոր իշխանութիւնք հրապարակաւ կը պախարակեն այդ արարքն և իրենց զգուշանքն կը յայտնեն, կամ բացարձակ ճշմարտութիւնսն երբ կ'ուրանաք և կամ կը յայտարարէք թէ այդ գարշելի արարքներուն հեղինակները կուսակցականներ չեն այլ օտար և անծանօթ անհասներ և կամ առ առաւելն հաւնակիրներ. և փոխանակ իբր յեղափոխական և ընկերաւարական դործող այդ հաւնակիրներու և օտար անհասներու պատիժն պահանջելու, անոնց չահատակութիւնները իբր ժողովրդին արդար զայրոյթին մի պերճախօս արտայայտութիւնը կը հռչակէք և կը փառաբանէք, խել մը սնտախ խմաստակութեանց վրայ հիմնուելով :

«Հայ ժողովրդի ընտանեկան կեանքի մաքրութիւնը քայքայելու համար, ամուսնութիւնը բանականութեան և բնական օրինաց հակառակ հիւն օրէնք հաստատութիւն մը կը հռչակէք և ազատ սէր կը քարոզէք. ծնողական հնազանդութիւնը ջնջելու համար, երիտասարդ մանկուտուն կուսուցանէք թէ ծնողք իրենց ֆէյֆիւն համար եղած են հայր և մայր, և հետեւաբար ամենեւին իրաւունք չունին պահանջելու իրենց զաւակներէն հնազանդութիւն, յարգանք և սէր :

«Հայ ժողովրդին աղգասիրութիւնը քայքայելու համար աշխարհաքաղաքացիութիւն (cosmopolitisme) կը քարոզէք և այս ամենուն մէջ կը մոռնաք թէ մարդկային սեւին յառաջդիմութիւնը մի միայն բարեչլոյթութեան անդիմադրելի օրինաց համաձայն աստիճանաբար կրնայ իրականանալ և ոչ թէ սօփայով, բէվօլվէրով և կամ պօմպայով : Բայց ինչ որ ձեր ծրագրին ամենէն դժոխային մի մասն կը կազմէ, այն է թէ՛ դուք ձեր այս բոլոր ցնորական և անիրականալի վարդապետութեանց և քարոզութեանց մահացուցիչ թոյնն Հայ երիտասար-

դութեան և մինչև իսկ Հայ մանկուտոյն անմեղ և անարատ բայց միանգամայն դիւրագգած և դիւրագրգիռ սրտին վրայ կը թափէք և այս նպատակաւ նախնական դպրոցներէն կսկսիք Հայ մանկուտոյն սորվեցնել անհաս զանդութիւն և ըմբոստութիւն, և մինչև իսկ բռնի ուժի կիրառում իր դաստիարակներուն և անօրէններուն դէմ, մոռնալով թէ այս դրութեամբ կապականէք Հայ նորածիլ սերունդն և Ազգին միակ յոյսն և միջնարդութիւնը կոչնչացնէք : Բայց զգոյշ կեցէք, որովհետեւ ալ Հայ Ազգը քաջ գիտակից է սպառնացող վտանգին եւ ի վիճակի է զինքը պաշտպանելու թէ իր սեպհական զաւակաց և թէ մանաւանդ Օսմանեան Ոստիկանութեան ուժով :

Առ այս կուսակցութիւնք կը պատասխանեն ոչ—կուսակցականաց՝ բոռն զայրոյթով .

«Մեծ—աղայութեան անիծեալ ոգին ի՞նչ աղեցուցիչ համեմատութեամբ ապականած և կուրացուցած է ձեր սիրան ու միտքն որ կը յանդգնիք այս աստիճան խեղածիւրել դէպքերը և ճշմարտութիւնները : Կուսակցականաց ծրագրին որ մասին մէջ տեսաք թէ մենք անկրօնաց ծրագրէն կը քաբողենք, ո՛ւր խմցաք որ յանուն կուսակցութեան խօսող բեմախօս մը անաստուածութիւն քարոզած ըլլայ : Մենք անկրօնութիւն չենք քարոզեր այլ կղերին մէկ մասին զեղծումները, խայտառակութիւններն և յափշտակութիւններն կը ձաղկենք և իրենցմէ հաշիւ կը պահանջենք. Հայ կղերին մէկ մասը որ Ձեր մեծ—աղաներու բնական դաշնակիցն է, ժողովրդին կուղէ սորվեցնել մի միայն իր պարտքը կատարել, բայց երբէք չզիջանիւր անոր սովբեցնելու իր իրաւունքն պաշտպանելու օրինաւոր միջոցները և ամէն ջանք ի գործ կը դնէ նորա անգիտակցութիւնը մշտնջենաւորելու համար՝ անհեթեթ նախապաշարումներով և մոլեռանդ աւելորդապաշտութիւններով : Հայ կղերին այս մասը, մասնաւորա-

պէս կ'աշխատի նախապաշարել ժողովուրդը իր ճշմարիտ բարեբարներուն, այսինքն նորա գիտակցութեանը համար անձնուիրաբար աշխատողներուն դէմ. մենք այդ ջանքերն է որ կ'ուզենք ամուլութեան մատնել: Մեր միակ նպատակը, մեր իտէալը ի վիճակի դնել է Հայ ժողովուրդը ճանչնալու և գործադրելու ոչ միայն իր պարտքն այլ և իր իրաւունքը:

«Եկեղեցիներու մէջ ժողովրդին խօսելու մեր պահանջին դալով, քանի որ մենք համոզուած ենք թէ ժողովրդին կենսական շահուց և օգտին համար է որ կը խօսինք. քանի որ մեր նպատակն է ոչ թէ անաստուածութիւն քարոզել նոյն ինքն եկեղեցիի մէջ, ինչպէս նենգամտութեամբ և վատաբար կը զրպարտէք մեզ, այլ մի միայն ժողովրդին միտքը լուսաւորել՝ իրեն սովորեցնելով իր իրաւանց պաշտպանութեան եղանակը. քանի որ մեր զուտ ժողովրդական Հայ Եկեղեցւոյն դարաւոր աւանդութիւնները կը վկայեն թէ՛ Հայ Եկեղեցին ոչ միայն ժողովրդին հոգւոյն փրկութեան այլ նաև նորա երկրային երջանկութեան նպաստող քարոզներ և ծանուցումներ լսելու յատուկ տաճար մ'է, և Հայ ժողովուրդը իւր եկեղեցին ի վաղուց հետէ այսպէս ճանչցած է, և այս տրամադրութեամբ միշտ եկեղեցի գացած է և կ'երթայ, ինչո՞ւ համար մենք այս տրամադրութենէն օգուտ չքաղենք և ժողովրդին պատկանող եկեղեցիին մէջ ժողովրդին կենսական շահերն ապահովցնող տնտեսագիտական, մտաւորական և բարոյական դասեր և խրատներ տալու չջանանք: Ով կ'արգիլէ Ձեզ մեր օրինակին հետեւելէ և Ձեր սեպհական տեսութիւնները և սկզբունքները եկեղեցիին մէջ ժողովուրդին սովորեցնելէ: Եկեղեցին աղօթատեղի է, կ'ըսէք և միայն աղօթքի համար պէտք է բացուի ժողովրդեան, բայց մենք ե՞րբ եկեղեցական արարողութեանց ժամա-

նակ աղօթքները խափանել փորձեցինք. մենք միշտ արարողութեանց աւարտելէն վերջ և շատ անգամ ալ բոլորովին տարբեր ժամանակ ուղած ենք խօսիլ ժողովրդեան: Եթէ եկեղեցին մի միայն աղօթատեղի է, ինչո՞ւ վարդապետներ քահանաներ քարոզներ կը խօսին և ծանուցումներ կ'ընեն արարողութիւնները և աղօթքները ընդմիջելով և հոգւոյ փրկութեան հետ մօտէն հեռուէն կապակցութիւն չունեցող խրատներ և յորդորներ կը կարգան ժողովրդին ըստ դարաւոր աւանդութեանց Հայ Եկեղեցւոյն: Եթէ եկեղեցւոյ մէջ աղօթքէ և զուտ հոգեւոր քարոզէ զատ ո՞ր և է խօսքով զբաղել սրբապղծութիւն է, ինչպէս կը համարձակին մաս մը Ձեզ դաշնակից քարոզիչներ Սեղանին բարձրէն զրպարտութիւններ և թշնամական ակնարկութիւններ տեղալ ոչ միայն կուսակցականաց, այլ նաև ոչ-կուսակցական ուղղափառ թաղականաց և կամ ուրիշ անձնական հակառակորդաց հասցէին: Այսօր ամենէն լուսաւորեալ և ամենէն բարեպաշտ և կրօնասէր ազգերն անգամ ընդունած են թէ կրօնքն և Եկեղեցին ալ կը պարտին հպատակիլ բարեշրջման օրինաց և հետեւաբար եկեղեցիին նուիրական պարտքն է իր վարդապետութիւնները և քարոզութիւնները ընկերական գիտութեանց տիեզերաբար ընդունուած վարդապետութեանց պատշաճեցնել, և սովորեցնել ժողովրդին ոչ միայն իր պարտքերն և Աստուած այլ նաև իր քաղաքացիական պարտքերն և իրաւունքն հանդէպ իւր Ազգին և Կառավարութեան: Արդ եթէ եկեղեցին մի միայն զուտ հոգեւոր քարոզներու սահմանուած է, ո՞ւր պիտի տրուին այս կրօնական և աշխարհական բարեխառն քարոզները:

«Կըսէք թէ մենք Սահմանադրութիւնը չենք ուզեր ճանչնալ իբր օրէնք. Մենք Սահմանադրութիւնը Ձենէ լաւ կը ճանչնանք և կը յարգենք. միայն կը պնդենք

թէ Սահմանադրութիւնը առանց ժողովրդին կատարեալ գիտակցութեան չկրնար ժողովրդին փրկութեան ծառայել, այլ ընդհակառակն առանձնաշնորհալ փոքրամասնութեան ձեռքը՝ ժողովուրդը շահագործելու օրինաւոր միջոց մը կը դառնայ արուեստական մեծամասնութիւններ կազմակերպելով: Այս ճշմարտութեան փափստ կ'ուզէք. կէս դարէ ի վեր հաստատուած է Հայ Սահմանադրութիւնը և միշտ օրինաւոր մեծամասնութեան վարուած են Ազգին վարչական գործերն, ինչո՞ւ այդ օրինաւոր մեծամասնութիւնը չկրցաւ և չուզեց ոչ-կուսակցական աշխարհականներու և կղերականներու յափշտակութեանց, խայտառակութեանց և անթիւ անհամար զեղծմանց վերջ տալ մինչեւ ցայսօր:

«Մեզ կ'ամբաստանէք թէ օրինական և սահմանադրական միջոցներու տեղ գաւազան և գէնք կը գործածենք, և անիրականալի գաղափարներ կ'ուզենք իրականացնել: Կուսակցականներն և ոչ-կուսակցականները միեւնոյն բարոյական մակարդակն ունեցող Հայ Ազգին զաւակներն են. քանի որ ոչ-կուսակցականաց մէջ ծայրայեղ, մոլեռանդ, ոճրագործ և անբարոյական անհատներ անպակաս են, կարելի է որ ատոնցմէ մի քանին կուսակցականաց մէջ սպրդած չըլլան. ոչ-կուսակցականաց մէջ ծայրայեղներ, մոլեռանդներ, ևայլն դաժնութեամբ պարագան ընդհանրացնելով՝ բոլոր ոչ կուսակցականները միեւնոյն մակդիրներով չէք յորջորջեր, ինչ խղճով բոլոր կուսակցութիւնները ծայրայեղ, մոլեռանդ ևայլն կ'անուանէք:

«Կ'ըսէք թէ մենք ժողովրդին և մինչև իսկ դարուցական մանկուոյն օրէնքի և կարգապահութեան դէմ ըմբոստութիւն կը սովորեցնենք: Մեր կուսակցութիւնք ամենախիստ կանոններով և կարգապահութեամբ միայն կրնան իրենց գոյութիւնը պահպանել, ինչպէս կրնան

ըմբոստութիւն քարոզել ժողովրդին առանց մտածելու թէ օր մը այդ ժողովուրդը միեւնոյն ըմբոստութեան կը դիմէ կուսակցութեանց դէմ: Մենք ինչպէս կը համարձակինք թելադրել աշակերտաց որ իրենց ոչ-կուսակցական դասատուները և տնօրէնները քանակութեան կամ բռնութեամբ դպրոցէն դուրս վտարէն՝ առանց խորհելու թէ միեւնոյն վարմունքը անվրէպ կ'ունենան օր մը իրենց կուսակցական դասատուաց և կամ տնօրէնին դէմ:

«Կ'ըսէք թէ մենք ժողովրդին ազգասիրական ոգին թունաւորել և ոչնչացնել կ'ուզենք, աշխարհաքաղաքացիութիւն քարոզելով. հոս ա՛լ յայտնի կ'երևայ ձեր անգիտակցութիւնը կամ ճշմարտութիւնը խեղաթիւրելու անյագ տէնջը: Մենք կը դաւանինք թէ Ընկերավարութիւնը և Յեղափոխութիւնը Ազգի մը յատուկ հաստատութիւններ չեն, այլ միջազգային կամ համաշխարհային հանգամանք մ'ունին. քանզի աշխարհի ամեն մասերուն, ամեն ազգերուն մէջ առանձնաշնորհալ փոքրամասնութիւն մը ժողովրդին մեծամասնութիւնը կը շահագործէ նորա անգիտակցութենէն օգտուելով, թէ իւրաքանչիւր ժողովուրդ իր ազգն սիրելով և պաշտելով հանդերձ, կը պարտի շահակից, աշակից և հետաքրքիր ըլլալ ամեն ազգի ժողովրդեան օրինաւոր ընկերավարական պահանջմանց: Այս գիտակցութիւնը ոչ թէ ժողովրդի մը ազգասիրութիւնը կը տկարացնէ այլ աւելի կ'ամրապնդէ: Չէ՞ք ընդունիր իմաստասէրին այն խրատն թէ անհատն կը պարտի սիրել իր ընտանիքը իր անձէն, իր ազգը իր ընտանիքէն և մարդկային սեռը իր ազգէն աւելի: Ո՞վ կ'ըսէ թէ միոյն սէրը՝ միւսներուն սէրը կ'արտաքսէ:

«Բայց Ձեր ամենամեծ ամբաստանութիւնը կը կայանայ սա նկատողութեան մէջ թէ մենք մեր դժոխային վարդապետութիւններով մասնաւորապէս կը միտինք

Թունաւորել Հայ մանկտւոյն և երիտասարդութեան սիրտն և խռովել միտքն: Բայց ո՞վ ըսաւ Զեյ թէ մեր վարդապետութիւններն թունաւորիչ են: Մենք համոզուած ենք ընդհակառակը թէ յետադիմական մեծ-ազաներն են որ Հայ Սահմանադրութենէն առաջ և վերջը թունաւորած են խեղճ հայ ժողովրդին սիրտն և միտքը, նախապաշարունակներով և աւելորդապաշտութիւններով բեռնաւորելով զայն, և ամեն սահմանադրական և հակասահմանադրական միջոցներով ժողովուրդը իր իրաւանց գիտակցութեան տիրանալէ արգելելով: Մենք կը հաւատանք ամենայն ջերմեռանդութեամբ և անկեղծութեամբ թէ մեր վարդապետութիւնք ժողովրդին թունաւորեալ սրտին և մտքին համար փրկարար թունաթափներ են, և այս հաւատքով է որ կ'ուզենք մանաւանդ Հայ Ազգին ապագան ապահովելու և բարելաւելու սահմանուած մեր ամենասիրելի հայ երիտասարդութեան մասնաւորապէս քարոզել մեր վարդապետութիւնները: Իբրեք եզրակացութիւն, կ'ազդարարենք ուրեմն ձեզ, համայն յետադիմական մեծ-ազաներու թէ ձեր դաւանած սահմանադրական օրինաւոր միջոցներով Հայ ժողովրդին տգիտութիւնը շահագործելու և ժողովրդիկեան բարեբարներուն ձայնը լռեցնելու ժամանակը չատո՞նց անցած է: Հին և նոր աշխարհի քաղաքակրթեալ ազգաց ընդունած տնտեսագիտական և ընկերվարական սկզբանց համաձայն պէտք է բաւարարութիւն տալ ժողովրդին օրինաւոր պահանջներուն և ամեն տեսակ զեղծմանց առաջին առնուլ: Այս ազդարարութիւնը պէտք է լուրջ նկատողութեան առնուք, ապա թէ ոչ ինչ որ դուք ձեր կամքովն ընել չպիտի ուղէք, շահագործեալ և հարստահարեալ ժողովրդին գիտակից անդիմադրելի կամքը, ձեզ ընել պիտի տայ կամայ, ակամայ:»

Այսպէս Կուսակցականք և ոչ-Կուսակցականք կը պնդեն իրենց փոխադարձ զանգատներուն և պահանջներուն վրայ բռնի ուժի սպառնալիքներով: Իզմիրի դէպքն ապացոյց մ'է թէ բռնի ուժ ըսելով, մինչև իսկ արիւնահեղութիւն և մահ պէտք է հասկնալ:

Թե որոնք են այն հիմնական տրամադրութիւնները զորս կը պարտի պարունակել Ազգային ընդհանուր ծրագիր մը, գոհացում տալու համար թէ Ազգին հական պէտքերուն եւ թէ Կուսակցականաց եւ ոչ-Կուսակցականաց իրաւացի եւ իրականալի փոխադարձ պահանջներուն:

Առաջին. Կուսակցական և ոչ-Կուսակցականներու մէջ կատարեալ համերաշխութիւն որուն էական և անհրաժեշտ պայմաններն են. (Ա) Կուսակցութեանց անցելոյն մէջ ունեցած գործունէութեան Հայ Ազգին օգտակար կամ վնասակար եղած ըլլալու հրատապ հարցին լուծումը պատմութեան անաչառ և անկողմնակալ դատողութեան ձգել և այս հարցին նկատմամբ երկու կողմանէ եւս ո՛ր և է ակնարկութիւն չընելով, Կուսակցութեանց միմիայն ներկայ և ապագայ գործունէութեան խնդրով զբաղիլ: (Բ) Ազգային ժողովներու և խորհուրդներու անդամոց ընտրութեան և ազգային պաշտօնեաներու և ուսուցիչներու անուանման ատեն՝ մի միայն արժանիքն և պարկեշտութիւնն հիմ բռնել և ամենեւին խտրութիւն չընել Կուսակցականներու և ոչ-Կուսակցականներու մէջ: (Գ) Նկատելով որ կարծեաց փոխանակութեան և մինչև իսկ բանակոխներու մէջ քաղաքավարութիւն և փափկանկատութիւն միայն զեղազիտական դարձեր չեն, այլ նաեւ անհրաժեշտ պէտքեր են, այնու զի վիրաւորիչ ակնարկութիւններ կամ նախատալից բռուր կիրքերը կը գրգռեն, դատողութիւնը կը խանգարեն և ամենէն օրինապահ և չափաւոր անձերն

անգամ՝ օրինազանցութեան և ծայրայեղութեան կը մղեն , հարկ անհրաժեշտ է թէ մամուլի և թէ հրապարակային վիճաբանութեանց մէջ վերջին ծայր զգուշանալ անձնականութենէ և նախատալի ակնարկութիւններէ :

Երկրորդ . Հայ ուսանողաց կրթութեան և դաստիարակութեան համար ժամանակին և միջավայրին տնտեսագիտական , մտաւորական և բարոյական պահանջմանց համաձայն կատարելագոյն մի կրթական ծրագիր մշակել և ամենայն անհառութեամբ կիրարկել , որպէս զի մեր ազգայինք կարող ըլլան յաջողութեամբ մրցելու օտար տարրերուն հետ : Այս ծրագրին պատրաստութեան ժամանակ անհրաժեշտ է նկատողութեան առնուլ առաջնակարգ պէտք մը , այն է սովրեցնել աշակերտաց իրենց առ Ազգն և առ Օսմանեան Տէրութիւնն ունեցած պարտականութիւններն և իրաւունքներն , և մանաւանդ թէ որոնք են այն օրինաւոր այսինքն սահմանադրական միջոցները որով կրնան և կը պարտին պաշտպանել իրենց իրաւունքները , թէ իբր Հայ թէ իբր Օսմանցի : Սովրեցնել մասնաւորապէս թէ ազատութեան և արդարութեան գոյութիւնը՝ մի միայն Սահմանադրական օրինաց հնազանդութեամբ և իր իրաւանց գիտակցութեամբ և օրինաւորապէս պաշտպանութեամբ կրնայ ապահովուիլ :

Երրորդ . Որովհետեւ դպրոցներն ամէնէն յառաջադէմ երկիրներու մէջ իսկ չեն կրնար լիովին գոհացում տալ ժողովրդի մեծամասնութեան տնտեսագիտական , մտաւորական և բարոյական պէտքերուն , դպրոցներէն դուրս ալ վերեւ յիշեալ կրթական ծրագրի համաձայն գիշերային և ցերեկային դասախօսութիւններ , գօնֆէռանսներ և միթինկներ կազմակերպել , մասնաւոր թերթեր հրատարակել և ամէն կարելի միջոցներով զարգացնել և լուսաւորել

ժողովրդին սիրտն և միտքն որպէսզի իր իրաւանց և պարտականութեանց գիտակցութեան տիրանայ :

Չորրորդ . Հետեւելով ամէնէն զարգացեալ և ամենէն կրօնասէր ազգերուն օրինակին , թէ դպրոցներու և թէ եկեղեցիներու մէջ քարոզները և կրօնական դասախօսութեանց ծրագիրը մարդկութեան արդի մտաւորական , տնտեսագիտական և ընկերաբանական պիտոյից և պահանջմանց պատշաճեցնել , փարատելով ամէն նախապաշարում և աւելորդապաշտութիւն և լուսաբանելով իւրաքանչիւր անհատի թէ առ Աստուած թէ առ իւր անձն թէ առ իւր Ազգն և Տէրութիւնն ունեցած պարտականութիւններն , բացատրելով մանաւանդ թէ ժողովրդին ինչպէս կը պարտի ճանչնալ և կատարել իր պարտականութիւնները , նոյնպէս կը պարտի ճանչնալ և իր իրաւունքները և զանոնք պաշտպանելու օրինաւոր միջոցները . թէ այս գիտակցութիւնը ոչ միայն քաղաքացիական և Սահմանադրական՝ այլ նաեւ կրօնական սուրբ պարտականութիւն մ'է :

Հինգերորդ . Մի կողմանէ փութոյ պնդութեամբ յօրինել Հայ Ազգին շարժուն և անշարժ գոյքերուն և կալուածներուն մի բովանդակ ցուցակն և հասոյթներուն և ծախսերուն ընդհանուր պիւտճէն և միւս կողմանէ ընդհանուր Ազգային պիւտճէի օրէնք մը ծրագրել , որուն մէջ մասնաւորապէս նկատողութեան առնուին Ազգին բոլոր հաստատութեանց մանաւանդ Երուսաղիմայ և միւս ազգապատկան վանքերու հասոյթից և ծախուց բարեւոք մատակարարութիւնը , այնպէս որ ամբողջ Ազգն համողով թէ այսուհետեւ ո՛ր և է զեղծում չկրնար պարտկուիլ և անպատիժ մնալ :

Վեցերորդ. Ազգային բոլոր պաշտօնատուներու վարչական օրէնքները բարեփոխել և կատարելագործել ըստ եւրոպական դրութեանց և մանաւանդ աշխարհական և կրօնական պաշտօնէից նկատմամբ արմատական մաքրագործում մը (թեմսիզաթ) իրականացնել, առանց ո՛ր և է խրտութիւն դնելու կուսակցական և ոչ-կուսակցական, պաշտպանեալ կամ անպաշտպան, հին կամ նոր պաշտօնէից մէջ:

Եօթերորդ. Ամուսնական օրէնքն և դատավարութեան եղանակն բարեփոխել և լրացնել՝ Հայ Եկեղեցւոյ աւանդութիւնները հաշտեցնելով արդի բարոյական, մտաւորական և տնտեսագիտական պահանջներու հետ և առ այս լուսաւորեալ Ազգաց միաձայնութեամբ ընդունած սկզբունքները առաջնորդ ունենալով:

Ութերորդ. Թէ Ազգային Տուրքի դրութիւնը բարեփոխելով և թէ հասոյթի նոր աղբիւրներ գտնելով և մանաւանդ ազգային ընդհանուր գոյքերն և ծախքերը և հասոյթներն իմաստուն և անաչառ կերպով մատակարարելով՝ գոյանալիք արդիւնքն յատկացնել ամենայն արդարասիրութեամբ և անկողմնակալութեամբ Ազգին կարօտագոյն և արժանաւորագոյն դասակարգին, որպէս զի կարելի եղածին չափ կարճ ժամանակի մէջ ըստ կարելոյն բազմաթիւ ժառանգազուրկ աշխատաւորներու առիթ և միջոց տրուի գոնէ համեստ սահմաններու մէջ իրենց կարգին հողատէր, կալուածատէր, դրամատէր և կամ բաթոն կամ շահակից ըլլալու, չնորհիւ մանաւանդ դործակցական (գօօրէնութիւլ) ընկերութեանց ծաւալման:

Իններորդ. Հողային և բոլոր միւս յարաբերական խնդիրներն կարելի եղածին չափ կարճ միջոցի մէջ միանգամ ընդ միշտ կարգադրել Բ. Դրան հետ Օսմանեան Սահ-

մանադրութեան հաստատած արդարութեան և հաւասարութեան անջնջելի իրաւանց համաձայն, յիշեցնելով թէ Հայ Ազգն է որ Օսմանեան սահմանադրութեան կրկին անգամ հաստատուելէն առաջ և վերջը՝ ամեն տարրէ աւելի տառապած և տուժած է բռնակալութեան երեսէն և հետեւաբար ամեն տարրէ աւելի արդար և առատ հատուցում պահանջելու իրաւունք ունի Սահմանադրական Կառավարութենէ:

Տասներորդ. Կուսակցականներու և ոչ-կուսակցականներու բացարձակ կերպով արգիւիւ ո՛ր և է կերպով բիրտ ուժի կամ զէնքի կիրարկում, ի հարկին ոստիկանութեան աջակցութեանը դիմել և օրէնքին ամբողջ խտտութեամբ պատժել տալ յանդգնողները, նկատելով զանոնք ոչ իբր ճշմարիտ Յեղափոխութեան և Ընկերավարութեան անձնուէր հերոսներ, այլ պարզ և գուհիկ չարագործներ:

Արդ եթէ կուսակցականք վերոյիշեալ պահանջումներու գոհացում տուող սոյն ընդհանուր ծրագրին անկեղծ և լիովին դործադրութեամբ բաւականանան գոնէ յաջորդ երկամիայ չրջանին տեւողութեամբ՝ յարգելով բարեչրչութեան անողք օրէնքներն, այն ատեն ապացուցած պիտի ըլլան անհերքելի կերպով թէ բառին ազնիւ նշանակութեամբ կատարեալ ընկերավարականներ են, և ամբողջ Հայ Ազգն իրենց համակիր և համերաշխ պիտի ըլլայ. իսկ եթէ ո՛ր և է կուսակցական՝ անկրօնութիւն, ազատ սէր, բռնի ուժի կիրարկում և ազգութացութեան իմաստով աշխարհ-հաքաղաքացիութիւն քարոզէն դպրոցէն և եկեղեցիէն ներս կամ դուրս, այն ատեն Ազգը զինքը պիտի նկատէ իբր վտանգաւոր և աղետաբեր մի իւթօփխթ:

Նոյնպէս եթէ Կուսակցականներն իրենց յեղափոխական դրօշն ծալեն յաջորդ երկամիայ չրջանին տեւողու-

թեամբ և օրինաւոր միջոցներով աշարուրջ հսկեն և խաւիր և գործով աջակցին վերոյիշեալ ընդհանուր ծրագրին անկեղծ գործադրութեան, այն ատեն Ազգին զիրենք պիտի նկատէ բառին ազնիւ իմաստով ճշմարիտ յեղափոխական հերոսներ, արժանի Ազգին և մարդկութեան գնահատման և յարգանաց. իսկ եթէ ո՛ր և է կուսակցական բռնի ուժ եւ բռնութիւն գործածելու յանդգնի, Ազգը այդպիսիները պիտի նկատէ իբր գոեհիկ ասպատակներ եւ վտանգաւոր ոճրագործներ:

Այլ նաեւ եթէ ոչ-կուսակցական մեծ-աղաներու, մեծ էֆէնտիներու եւ կղերականներու եւ մամուլի ներկայացուցիչներու մէկ որոշեալ մասը սահմանադրական մեքենայութեամբ եւ դաւադրութեամբ եւ մանաւանդ կրաւորական դիմադրութեամբ խուլ պայքար մը մղէ ժողովրդին բարեշրջական յառաջդիմութեան դէմ, երբ յաւարտ յաջորդ երկամեայ շրջանին՝ փորձը հաստատէ թէ օրինաւոր միջոցներով կարելի չէ եղած եւ չպիտի ըլլայ ժողովրդին վիճակը բարւոքել եւ զեղծումներուն առաջքն առնուլ, երբ հետեւաբար կուսակցականք ալ եւս չկարենալով հանդուրժել Հայ ժողովրդին սոյն արգահատելի վիճակին, Յեղափոխութեան դրօշը պարզեն, պարծանօք եւ գոհունակութեամբ պիտի տեսնեն թէ Հայ Ազգին ամենէն անկեղծ եւ ամենէն խաղասէր եւ ողջամիտ զաւակներն պիտի համախմբին այդ դրօշին շուրջ եւ այն ատեն առանց բռնի ուժի կիրարկութեան պէտք մնալու, արմատական եւ վերջնական մաքրագործում մը պիտի կատարուի յօգուտ եւ ի փառս Հայ Ազգի եւ ժողովրդի:


Ամենէն ազնիւ գաղափարի շուրջ համախմբուող կուսակցութեանց ազնիւ, անձնուէր եւ օրինասէր անդամներու շարքերուն մէջ կեղծաւոր, չահախնդիր եւ օրինաւորանց մոլեռանդներ կը սպրդին անվրէպ: Հաւաստի եմ որ համայն ոչ-կուսակցական ազատականներու զգացմանց

հաւատարիմ թարգմանն կ'ըլլամ յայտարարելով թէ՛ ըստ մեր համոզման կուսակցութիւնք սիրով կը մաքրագործեն իրենց շարքերը այս կարգի վնասակար ինքնամուլներէ, եւ բնաւ չեն հանդուրժեր որ ո՛ր և է ապօրինաւոր միջոցի կիրառմամբ արատաւորուի ճշմարիտ Յեղափոխութեան եւ Ընկերավարութեան նուիրական անունը: Այս համոզմամբ է որ մենք ոչ-կուսակցական ազատականքս դիրք բռնած ենք կուսակցականաց շարքերուն քով և այս համոզման ուժով է որ անկեղծօրէն պիտի աջակցինք այն ամէն զիւլցադնական և օրինապահ ջանքերուն զորս պիտի շուային թէ Հայ Ազգին անցեալ աղէտները դարմանելու և թէ մօտ ապագայի մէջ՝ իրենց սրտին հատորն եղող Հայ ժողովուրդը՝ իր պարտուց եւ իրաւանց կատարեալ գիտակցութեան տեսակէտով Օսմանեան տարրերուն առաջինը հանդիսացնելու համար, գիտակցութիւն մը որ ո՛ր և է ժողովրդի քաղաքակրթութեան եւ բարօրութեան միակ պայմանն է:

Կը վերջացնեմ սոյն կոչն խնդրելով պատուարժան երեսփոխաններէ որ կուսակցականաց եւ ոչ-կուսակցականաց կողմանէ կարգեալ ներկայացուցիչներ քննեն ուշի ուշով վերոյիշեալ Ընդհանուր Ազգային Ծրագրի ուրուագիծը եւ իրենց պատշաճ տեսած բարեփոխութեամբ հաստատեն զայն: Այս վերջնական ծրագրին համաձայնութեամբ ընդունուելէն վերջ միայն, պատկառելի Ազգային ժողովն կատարեալ գիտակցութեամբ պիտի ընտրէ նոր Վարչութեան անդամները^(*) եւ այս նոր Վարչութիւնը պիտի կրնայ անխափան աշխատիլ յօգուտ Ազգին. նոյնպէս այս ծրագրին ընդունուելէն վերջը միայն Ազգ. Ժո-

(*) Այս տողերը գրուելէն վերջը, համերաշխութեան բանակցութիւնը խզուեցան և Ազգային ժողովոյ մեծամասնութիւնը Քաղաքական Ժողովոյ հրաժարականը մերժեց:

դովը կատարեալ գիտակցութեամբ եւ խղճմտութեամբ պիտի կրնայ որոշել թէ արդեօք խմաստութիւն եւ արդարութիւն է ընդունիլ Դուրեան Սրբազանի նման սննդասիր Պատրիարքի մը պատճառաբանեալ հրաժարականը որ իր վարչական մի քանի սխալներու հակառակ՝ դարձեալ է եւ կը մնայ, Ազգին ստուար մէկ մեծամասնութեան կարծեօք, արժանաւորագոյն Նախագահն Ազգային Վարչութեան եւ ամէնէն պատկառելի Պատրիարքն հանդէպ Օսմանեան Իշխանութեան: Իսկ եթէ Դուրեան Սրբազան անդրդուելի մնայ իր հրաժարականին մէջ եւ կամ Մեծամասնութիւնը որոշէ թէ արդի պարագայից բերմամբ, անհրաժեշտ է ընդունիլ Նորին Սրբազնութեան հրաժարականը, դարձեալ այս ծրագրին ընդունուելէն վերջը միայն Ազգային ժողովը կատարեալ գիտակցութեամբ պիտի ընտրէ այս ծրագրին շուրջ մղուելիք սահմանադրական եւ կենսատու պայքարն վարելու եւ առաջնորդելու՝ ամենէն կարող պատրիարքն: Նա մանաւանդ, այս ծրագրին շուրջ մղուելիք պայքարն է որ, յաջորդ վարչական չըջանին պիտի ապացուցանէ թէ՛ կուսակցականաց եւ ոչ-կուսակցականաց փոխադարձ պահանջներէն եւ գանգատներէն որոնք իրաւացի եւ անկեղծ են, որոնք անիրաւ եւ կեղծ: Միով բանիւ այս ծրագրին գործադրութիւնն է որ, դիմակները վար պիտի առնէ կամայ ակամայ, եւ մենք մինչեւ որ դիմակները միանգամայն ընդ միշտ վար առնուած չտեսնանք, չպիտի կրնանք ապահով ըլլալ թէ՛ Ազգը իրօք փրկութեան ճամբուն մէջ մտած է:



2013

ՀՀ Ազգային գրադարան



4282

10/18